ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 821Ա

05 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԹԻՎ 01/26 ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալը, քննության առնելով թիվ 01/26 վարչական գործը՝ հարկային պարտավորությունների ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» Կրոնական Կազմակերպությունը /հասցե՝ ք.Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ ՀՀ-ում գործածվող անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգից /VXSOFT ծրագիր/ ստացված տեղեկանքներիհիման վրա, 2026 թվականի մայիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանը «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ին 06.05.2026 թվականի թիվ 2193 գրությամբ ծանուցել է պարտավորությունների մասին: «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի կողմից 2026 թվականի մայիսի 14-ին ուղարկվել է թիվ 26/063 դիմումը՝ լսումներ անցկացնելու մասին:

2026 թվականի մայիսի 25-ին և հունիսի 2-ին հրավիրվել են լսումներ թիվ 01/26 վարչական գործով:

2026 թվականի մայիսի 25-ին «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի ներկայացուցչի կողմից ստացվել է դիմում՝ կից բացատրություններով, մասնավորապես, ներկայացված բացատրություններում նշվում է, որ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի անշարժ գույքի հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքում առկա են անհամապատասխանություններ, տեղեկանքում ներկայացված որոշ գույքեր ՀՀ կառավարության որոշման համաձայն ազատված են անշարժ գույքի հարկից, առկա են գույքեր, որոնք կրկնվում են տեղեկանքի տարբեր տողերում կամ առկա չեն անշարժ գույքերը նույնականացնող տեղեկություններ, կամ առկա են այնպիսի անշարժ գույքեր, որոնք հարկային օրենսգրքով են ազատված անշարժ գույքի հարկից կամ տեղեկանքում ներառված են այնպիսի գույքեր, որոնք ՀՀ կառավարության կողմից ետ են վերցվել «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ից:

Հաշվի առնելով ներկայացված բացատրությունները համայնքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվել «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի

կողմից դրսուսով բարձրացված հարցերը պարզելու ուղղությամբ, սասսակորապես, Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի ՀՀ կադաստրի կոմիտեին ուղղված 01.06.2026 թվականի թիվ 2790 գրությամբ, խնդրվել է տրամադրել տեղեկատվություն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ սեփականության կամ անհատույց օգտագործման և /կամ այլ իրավունքով պատկանող անշարժ գույքերի վերաբերյալ:

Միաժամանակ գրություն է ուղղվել ՀՀ Արմավիրի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությունից համայնքին պարզաբանում տրամադրելու համար, որի համաձայն խնդրվել է պարզաբանել արդյո՞ք հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով կիրառելի են Հայաստանի Հանրապետության կառավարության 28.02.2013 թվականի թիվ 178-Ա և 15.06.2017 թվականի թիվ 686-Ա որոշումները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի /Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին/ Կրոնական Կազմակերպությանը անշարժ գույքի հարկից ազատելու մասով:

Այնուհետև, «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի ներկայացուցչի կողմից 01.06.2026 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով համայնքապետարանին է ուղարկվել թվով 62 անշարժ գույքերի վերաբերյալ սեփականության վկայականների պատճենները:

Հիմք ընդունելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ առաջացել էր անհրաժեշտություն պարզելու 06.05.2026 թվականին հարուցված թիվ 01/26 վարչական վարույթում ներառված անշարժ գույքերի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված ցանկում գտնվելու հանգամանքը, համապատասխան մարմիններին ուղղված հարցումների պատասխանները ստանալու նպատակով և «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿԿ-ի ներկայացուցչի կողմից տրամադրված թվով 62 անշարժ գույքերի սեփականության վկայականների ուսումնասիրության և անշարժ գույքի հարկի հաշվառման համակարգում զետեղված գույքերի հետ համադրելու անհրաժեշտությունից ելնելով, Վաղարշապատի համայնքապետարանի հարկային պարտավորությունների խախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը առաջարկել էր 06.05.2026 թվականին հարուցված թիվ 01/26 վարչական վարույթը կասեցնել՝ մինչև 30 օր ժամկետով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝

«Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

2. Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

3. Սույն օրենքով նախատեսված ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով:

Եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օրը, ապա ժամկետն ավարտված է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18-00-ին»:

«Վարչարարության որոշումներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի երկրորդ պարբերության համաձայն՝

«...վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«... Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը»:

Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝

«...Վարչական վարույթի կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել վարույթի ցանկացած փուլում»:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վարչական մարմինը պարտավոր է ապահովել վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, 46-րդ, 49-րդ, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կասեցնել 06.05.2026 թվականին հարուցված թիվ 01/26 վարչական գործի վարույթը՝ սույն որոշումն ընդունելու օրվանից 30 օր ժամկետով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

Մուտքագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 822Ա

05 փետրվարի **2026թ.** **ք. Էջմիածին**

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ և ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 22.02.1991 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 27.1 կետերի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ֆրանց Վերֆելի /նախկին Շոլոխով/ փողոցի թիվ 11 տան բնակիչ Անահիտ Ալեքսանի Ղազարյանի դիմումը, Անդրանիկ Հմայակի Ներսիսյանի ամուսնության և մահվան վկայականները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Զվարթնոցի հողային ռեֆորմի և սեփականաշնորհման կենտրոնական և տեղական հանձնաժողովի 22.02.1991թ. թիվ 3 արձանագրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Ներսիսյան Անդրանիկ Համայակի» բառերը փոփոխել « Ներսիսյան Անդրանիկ Հմայակի» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Լ.ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 823-Ա

05 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 31-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 40, ԹԻՎ 78 ԵՎ ԹԻՎ 79 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և 10-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 22-ի թիվ 69-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին փոխարինողի 2026 թվականի հունիսի 3-ի N 1318-Ա հրամանը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատ համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 15-ի <<«Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի

աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 31-Լ որոշմամբ հաստատված թիվ 40, թիվ 78 և թիվ 79 հավելվածները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

X Սորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 824Ա

05 հունիսի 2026 թ. քաղաք Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 475 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 18 շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ Սամվել Արամայիսի Այվազյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0526-0015 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 02.02.2026թ. տրված՝ թիվ Ամ-107 արխիվային քաղվածք, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 26.01.2023թ. Հաստատված 369 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 06.04.2026թ. Հաստատված 1557 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011VXQTDKC/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 475 հողամաս:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 825Ա

05 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ 22.05.1994 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ N 15 ԱԿՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 27.1 կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Էվելինա Արզումանյանի լիազորված անձ՝ փաստաբանների պալատի փաստաբան՝ Շողակաթ Արոյանի դիմումը և Վաղարշապատի արխիվում պահպանված ու դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Էջմիածնի քաղսովետի բնակարանային վարչության թիվ «2» տնային կառավարչության կողմից 03.06.1994թ. տրված տեղեկանքում նշված «Կարաբուլուտյան Շնորհիկ Խաչիկի» բառը փոփոխել «Կարաբուլուտյան Շնորիկ Խաչիկի» բառով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Շողակաթ Արոյանին հանձնելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 826Ա

05 հունիսի 2026 թ.Ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՖՈՐՄԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 12.03.1991 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ԹԻՎ 3 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 27.1 կետերի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի, պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 47 շենքի թիվ 41 բնակարանի բնակիչ Վարուժան Արմենակի Հակոբյանի դիմումը, Արմենակ Ասատուրի Հակոբյանի ամուսնության և ծննդյան վկայականները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատի գյուղացիական կոլեկտիվ տնտեսության հողային ռեֆորմի և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 12.03.1991թ. թիվ 3 արձանագրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «Հակոբյան Արմեն» բառերը փոփոխել «Հակոբյան Արմենակ Ասատուրի» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 827Ա

08 հունիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԻ 04-021-0251-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Արշալույս գյուղի 26-րդ փողոց թիվ 5 տան բնակիչ Սևակ Վաչիկի Ստեփանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Արշալույս գյուղի 04-021-0251-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 18062013-04-0022 տրված՝ 18.06.2013թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04062CAJVYKA/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Արշալույս գյուղ, 35-րդ փողոց, թիվ 45 հողամաս:
2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 828 -Ա

08 հունիսի 2026թ. **ք.Էջմիածին**

ՈՉ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԳՈՀԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ ՎԻ 10/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2/115 հասցեում «Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատիրոջ (գրանցման հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Արագածի զանգված 2 շենք, 83 բնակարան, պետ.գրանցման համար՝ 99.1342495 /2023-09-19, ՀՎՀՀ՝ 49807048, ն/ք՝ 019977073, տրված՝ 26.09.2025 թվականին, 057-ի կողմից) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2/115 հասցեում թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից 22.05.2026 թվականին կազմված թիվ ՀՍ-3 արձանագրության հիման վրա, 2026 թվականի մայիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում, որի անցկացման վայրի և ժամանակի մասին «Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 22.05.2026 թվականին կազմված թիվ ՀՍ-3 արձանագրությունը և լուսանկարները:
2. Հանձնաժողովի 02.06.2026թ. և 08.06.2026թ. թիվ 10/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները:
3. «Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատիրոջ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի քաղվածքը:
4. 02.06.2026 թվականի azdarar.am պաշտոնական հրապարակային ծանուցումների կայքում տեղադրված ծանուցման վերաբերյալ փաստաթուղթը:

բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2/115 հասցեում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում՝ համայնքային ընդհանուր օգտագործման տարածքում /մայթ/, արգելափակելով հետիոտների անխոչընդոտ տեղաշարժը, տեղադրել է մրգերով և բանջարեղեններով արկղեր և իրականացրել առևտուր:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի մայիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հունիսի 2-ին հրավիրվել է լսում, որը հետաձգվել է անհատ ձեռնարկատիրոջ կողմից ծանուցումը չստանալու պատճառով:

Այլ հերթի նշանակված լսումը հրավիրվել և անցկացվել է 2026 թվականի հունիսի 8-ին, իսկ ծանուցումը հրապարակվել է նաև ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

«Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատերը, չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով վարչական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին՝ չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը գալիս է հետևյալ եզրահանգման.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Տվյալ դեպքում՝ «Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2/115 հասցեում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում՝ համայնքային ընդհանուր օգտագործման տարածքում /մայթ/:

«Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից հակահիրավական վարքագիծը շարունակելու արդյունքում, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց բազմիցս ներկայացված բանավոր պահանջներին, վերջինիս նկատմամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից 22.05.2026 թվականին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով կազմվել է թիվ ՀՍ-3 արձանագրությունը և իրավախախտման փաստի վերաբերյալ դրանց կատարման վայրում արվել են համապատասխան լուսանկարներ, որոնք հանդիսացել են արձանագրության անբաժանելի մաս, որոնց առնչությամբ՝ որպես իրավախախտմանը

վերաբերելի ապացույց, արձանագրության կազման ժամանակ «Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից որևէ դիտարկում չի արվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ, 32-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար՝ **70 000 /յոթանասուն հազար/** ՀՀ դրամի չափով, առանց առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավման:

2. Նախազգուշացնել «Գոհար Սարգսյան Գրիգորի» անհատ ձեռնարկատիրոջը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 829Ա

09 հունիսի 2026 թ. Է. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՍՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 20-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդև 24-րդ, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 1 փակուղու թիվ 4 տան բնակիչ Արման Սահակի Պողոսյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 15052026-04-0039 տրված՝ 15.05.2026թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 041625B8HHBB, 04162CEH7YEY/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մրգաստան բնակավայրի 20-րդ փողոցի թիվ 27 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան բնակավայր, 20-րդ փողոց, թիվ 27 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մրգաստան բնակավայր, 20-րդ փողոց թիվ 27/1 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 830Ա

09 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՀԻԿ ՎԱՐՇԱՄԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022 թվականի թիվ 24 որոշումը, հաշվի առնելով սոցիալական ծրագրերի և առողջապահության հարցերի բաժնի պետ Սամվել Վարդանյանի զեկուցագիրը՝ Արցախից բռնի տեղահանված, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Գր. Լուսավորիչ փողոցի 4 շենքի 23 բնակարանի բնակիչ Վահիկ Վարշամի Մնացականյանի բնակարանի գազաֆիկացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից «Արթշինստրոյ» ՍՊԸ-ի 220213332467000 հաշվեհամարին փոխանցել 100000/ մեկ հարյուր հազար/ դրամ՝ Վահիկ Վարշամի Մնացականյանի բնակարանի գազաֆիկացման համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

Մտորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 831Ա

09 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 376Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Զվարթնոց թաղամասի 15 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Սիրանուշ Գեղամի Բաբայանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենց թաղամաս 376 բ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2643254 տրված՝ 26.12.2008թ, «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 13.05.2026թ. հաստատված 3640 սեղանամատյանով ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011JQTYNM3 /տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Եղիշե Չարենցի 1-ին թաղամաս թիվ 376/5 հողամաս:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 832Ա

09 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Արմեն Հովհաննեսի Ջաբրոյանի լիազորված անձ Արթուր Կամոյի Բաբայանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 07.05.2026թ. հաստատված թիվ 3437 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04022FXP5PR3/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 3-րդ փողոց , թիվ 14 հողամաս:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 833Ա

09 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՏԱՄԵՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Ա.ՍԵՆ ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Հովտամեջ բնակավայրի Ա. Ամիրյան փողոցի թիվ 4 տան բնակիչ Հովհաննես Գուրգենի Նիկողոսյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 29072025-04-0001 տրված՝ 29.07.2025թ., «Ջիվան Հարությունյան Արսենի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 18.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04142VLQHFT4,04142QBXJEE2, 04142W2BUJLB,04142SACQGWS/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Հովտամեջ բնակավայրի Ա.Ամիրյան փողոցի թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Հովտամեջ բնակավայր, Ա.Ամիրյան փողոց, թիվ 4/1 շինություն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Հովտամեջ բնակավայր, Ա.Ամիրյան փողոց, թիվ 4/2 հողամաս,

Առանձնացվող հատված 3-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Հովտամեջ բնակավայր, Ա.Ամիրյան փողոց, թիվ 4/3 հողամաս,

Առանձնացվող հատված 4-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Հովտամեջ բնակավայր, Ա.Ամիրյան փողոց, թիվ 4 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԼԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 834Ա

09 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 127 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 127 տան բնակիչ Գևորգ Վարդանի Գրիգորյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 30042026-04-0014 տրված՝ 30.04.2026թ., «Սեվան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 07.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011LHXXUAM, 04011DEZSZ6L/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 127 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք,ք. Էջմիածին, Ե.Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 127/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք,ք. Էջմիածին, Ե.Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 127 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 835Ա

09 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 438 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արաքս համայնքի Խորոնք բնակավայրի Մ.Խորենացու փողոցի թիվ 2 տան բնակիչ Վիգեն Վազգենի Նաջարյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 22042026-04-0003 տրված՝ 22.04.2026թ., «ՅԱՐԴ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0502/ կողմից 22.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011WH9T6BM, 040112JXRKFX/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե.Չարենցի 1-ին թաղամասի թիվ 438 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Ե.Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 438 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք,ք. Էջմիածին, Ե.Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 438/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ